

Հռոմեական Կայսրության մեկ բաժինը կը կազմեր: Թեև Օգոստինոսի հայրը բազմաստուածեան հեթանոս մըն էր, սակայն ան, իր քրիստոնեայ մօրմէն, կը ստանայ քրիստոնեական դաստիարակութիւն: Իր կեանքի ընթացքին, Օգոստինոս երկար տարիներ հետեւած է Մանիքեութեան (Manicheism), ինչպէս նաեւ՝ կասկածապաշտ Ստոյիկութեան (Stoicism) ու Նորապատոնական (Neoplatonism) փիլիսոփայական ուղղութիւններուն: 33 տարեկանին, Իտալիոյ մէջ, կ'ընդունի Քրիստոնէութիւնը եւ կը մկրտուի: Այնուհետեւ կը վերադառնայ իր ծննդավայրը, ուր կը դառնայ շրջանի առաջնորդ եպիսկոպոսը: Հետագային, Կաթոլիկ Եկեղեցւոյ կողմէ կը սրբադասուի. իսկ Օրթոդոքս Եկեղեցւոյ կողմէ ան կը դասուի երանելիներու կարգը: Հայ գրականութեան մէջ ան ծանօթ է, որպէս *Օգոստինոս Երանելի*:

Օգոստինոսի նշանաւոր երկերէն կը նկատուի՝ «*Աստուծոյ քաղաքի մասին*» (426 թ., լատ. բնագիր՝ „de civitate dei“, անգլ.՝ „City of God“), ուր կը ներկայացուին երկու հակադիր պետութիւններ՝ երկրայինը եւ երկնայինը:

Օգոստինոսի փիլիսոփայական-աստուածաբանական գլխաւոր երկը, սակայն, կը կոչուի «*Խոստովանութիւններ*» (400 թ., լատ. բնագիր՝ „confessiones“, անգլ.՝ „Confessions“), որու սկիզբը կը ներկայացնէ իր հրաշալի դարձը դէպի Քրիստոնէութիւն. այնուհետեւ՝ փիլիսոփայական ուսանելի նիւթեր կան, ինչպէս՝ «գիտակցութիւն», «յիշողութիւն» եւ «Ժամանակ»: Օգոստինոս, իր *ինքնաճանաչման* գործընթացը կը կապէ Աստուծոյ եւ՝ իր Անոր հանդէպ ունեցած հաւատքին: Այլ խօսքով, միայն Աստուծոյ լոյսին տակ եւ հաւատքով կարելի է ինքզինք ճանչնալ եւ այլ ճշմարտութիւններ իմանալ: Օգոստինոսի համաձայն, բանականութեան տէր մարդը կը բաղկանայ մարմնէ ու հոգիէ, ուր կը շեշտուի հոգիի նախապատուութիւնը: Իսկ մարդու ներքինը, կը ներկայացնէ երրորդութեամբ մը (գիտակցութիւն – իմացականութիւն – կամք), որ նման է Աստուծային երրորդութեան (Հայր – Որդի – Հոգի):

Օգոստինոսի բարոյագիտութեան հիմնական հասկացութիւնը *սէրն* է, որ կը համընկնի *կամքին* հետ: Իսկ մարդու գլխաւոր նպատակը՝ *երանութիւն*ն է կամ գերերջանկութիւնը:

Օգոստինոսի համաձայն մարդ ունի *կամքի ազատութիւն* (Free Will): Այս ազատ կամքը սակայն ենթակայ է չարաշահութեան, որու պատճառով մարդ մեղք կը գործէ, Ադամի եւ Եւայի օրինակով: Մարդու մօտ գտնուող դէպի չարք թեքումը նաեւ կապ ունի *սկզբնական մեղքին* (Original Sin) հետ: Այստեղ, Օգոստինոսի եզրակացութիւնը այն է, որ մարդ չի կրնար անկէ փրկուիլ, լոկ իր ուժերուն ապաւինելով կամ բանականութեամբ, այլ միայն աստուծային ողորմածութեան ու աստուծային շնորհի միջոցով: Լուծման այս ձեւը, ըստ Օգոստինոսի, մարդու համար հասկնալի կամ ըմբռնելի չէ. մարդ պետք է միայն հաւատայ անոր:

Այն հարցումին, որ եթէ Աստուած ամենակարող եւ ամենաբարի է, ինչո՞ւ գոյութիւն ունի *չարը*, Օգոստինոս կը պատասխանէ (համեմատելով բարիին), որ *չարը* դրական իրողութիւն մը (գոյ մը) չէ, այլ բարիին բացակայութիւնն է: